

ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2025

ՏԱՎՈՒՇ

ՖԻԶԻԿԱ

ԹԵՍ 3

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացնենք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը Դուք ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնայելով նշել պատասխանների ձևաթուղթում: Պատասխանների ձևաթուղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Ցանկանում ենք հաջողություն:

1

Ի՞նչն են անվանում նյութական կետ:

- 1) տարածության մեջ մարմնի դիրքը ցույց տվող կետը
- 2) մարմինը, որի չափերը տվյալ խնդրի պայմաններում կարելի է անտեսել
- 3) շատ փոքր զանգվածով մարմինը
- 4) շատ փոքր չափեր ունեցող մարմինը

2


Ո՞ր համարով է նշված նախադասության ձիշտ շարունակությունը:

Ուղղագիծ հավասարաչափ շարժման ժամանակ . . .

- 1) արագության մոդուլը չի փոխվում, ուղղությունը փոխվում է
- 2) արագության մոդուլը փոխվում է, ուղղությունը չի փոխվում
- 3) արագության մոդուլն ու ուղղությունը չեն փոխվում
- 4) արագության և՝ մոդուլը, և՝ ուղղությունը փոխվում են

3


Ուղղաձիգ վեր արձակած նետի կոռորդինատի՝ ժամանակից կախումը պատկերված է գրաֆիկում, որի մի մասը չի երևում: Օգտվելով այդ գրաֆիկից՝ որոշեք նետի առավելագույն բարձրությունը: Օդի դիմադրությունն անտեսել, ազատ անկման արագացումը՝ 10 m/s^2 :



- 1) 130 m
- 2) 140 m
- 3) 120 m
- 4) 125 m

4


Թելից կախված գնդիկը հավասարաչափ պտտվում է հորիզոնական հարթության մեջ: Ո՞ր համարով է նշված գնդիկի վրա ազդող ուժերի համագորքը:



- 1) 3
- 2) 4
- 3) 1
- 4) 2

5

Նկարում պատկերված շարժվող սայլակի վրա նրա նկատմամբ անշարժ վիճակում գտնվում է m զանգվածով մարմինը: Ինչպես է ուղղված մարմնի վրա ազդող շփման ուժը:




- 1) շփման ուժ չի ազդում
- 2) կարող է ունենալ կամայական ուղղություն
- 3) ունի \vec{F} ուժի ուղղությունը
- 4) հակառակ է ուղղված \vec{F} ուժին

6 Յուրաքանչյուրը m զանգվածով երկու գնդեր, որոնց կենտրոնների միջև հեռավորությունը r է, միայնակ ձգում են գրավիտացիոն F ուժով: Որքա՞ն կլինի նրանց գրավիտացիոն ձգողության ուժը, եթե յուրաքանչյուրի զանգվածը լինի $2m$, իսկ նրանց կենտրոնների միջև հեռավորությունը՝ $2r$:


- 1) $4F$
- 2) $8F$
- 3) F
- 4) $2F$

7 Նկարում պատկերված դեպքերից որո՞ւմ ճշորթու պարաները կենթարկվեն ամենափոքր լարվածության ուժի:



- 1) q դեպքում
- 2) բոլոր դեպքերում լարվածության ուժերը հավասար են
- 3) w դեպքում
- 4) p դեպքում

8 Նկարում պատկերված է հորիզոնի նկատմամբ անկյան տակ նետված մարմնի շարժման հետազիծը: Հետազիծի n -ր կետում մարմնի լրիվ մեխանիկական էներգիան ունի ամենամեծ արժեքը: Օդի դիմադրությունը հաշվի առնել:



- 1) C կետում
- 2) Բոլոր կետերում նույնն է:
- 3) A կետում
- 4) B կետում


9 F° նշ միավորով է արտահայտվում կինետիկ էներգիան միավորների ՄՀ-ում:

- 1) $\frac{1}{2}qm^2/v^2$
- 2) $\frac{1}{2}qm^2/v$
- 3) $\frac{1}{2}qm/v^2$
- 4) $\frac{1}{2}qm/v$

10 Աշակերտը ուսումնասիրում էր փայտե մարմնի լողալու պայմանները տարբեր հերուկներում: Ինչպէ՞ս փոխվեցին մարմնի ծանրության ուժը և հերուկում նրա ընկդմված մասի ծավալը, եթե նա մարմինը ջրից տեղափոխեց ավելի փոքր խտություն ունեցող արեածաղիկի յուղի մեջ:

- 1) Ծանրության ուժը չփոխվեց, ընկդմված մասի ծավալը փոքրացավ:
- 2) Ծանրության ուժը չփոխվեց, ընկդմված մասի ծավալը մեծացավ:
- 3) Ծանրության ուժը մեծացավ, ընկդմված մասի ծավալը փոքրացավ:
- 4) Ծանրության ուժը փոքրացավ, ընկդմված մասի ծավալը մեծացավ:

11 Նկարում պատկերված է ներդաշնակ տատանումներ կատարող մարմնի կոռորդինատի՝ ժամանակից կախումն արտահայտող գրաֆիկը: Ժամանակի ո՞ր պահերին է մարմնի արագությունը հավասար զրոյի:



- 1) 0, 1, 2, 3, 4, 5, 6 վ
- 2) 2, 4, 6 վ
- 3) 0, 2, 4, 6 վ
- 4) 1, 3, 5 վ

12 Ո՞ր համարով է նշված ձայնի ուժգնությունը որոշող պարամետրը անփոփոխ հաճախության դեպքում:

- 1) տատանումների փուլ
- 2) լայնույթ
- 3) ալիքի երկարություն
- 4) ալիքի տարածման արագություն





13 Անոթում իդեալական գազի ճնշումը փոքրացավ 4 անգամ, իսկ նրա մոլեկուլների շերմային շարժման միջին կինետիկ էներգիան փոքրացավ 2 անգամ: Ինչպէ՞ս փոխվեց այդ դեպքում անոթում գազի մոլեկուլների կոնցենտրացիան:

- 1) մեծացավ 2 անգամ
- 2) փոքրացավ 2 անգամ
- 3) մեծացավ 4 անգամ
- 4) փոքրացավ 4 անգամ

14

Հաստատուն գանգվածով իդեալական գազը սկզբում տաքացնում են՝ հաստատուն պահելով ծավալը, այնուհետև հաստատուն ջերմաստիճանում ընդարձակում են, իսկ հետո հաստատուն ձնշման տակ նրա ծավալը փոքրացվում է մինչև սկզբնական արժեքը: Ո՞ր գրաֆիկն է համապատասխանում նշված փոփոխություններին:

- 1) զ
- 2) դ
- 3) ա
- 4) բ



15

Իդեալական գազի ջերմաստիճանը իզոբար կերպով մեծացրին 3 անգամ: Ինչպես փոխվեց գազի խտությունը:

- 1) մնաց նույնը
- 2) պատասխանը կախված է գազի ծավալից
- 3) մեծացավ 3 անգամ
- 4) փոքրացավ 3 անգամ

16

Ինչպես փոխվում իդեալական գազի ներքին էներգիան իզոթերմ ընդարձակման ժամանակ:

- 1) չի փոխվում
- 2) կարող է մեծանալ կամ կփոքրանալ
- 3) մեծանում է
- 4) փոքրանում է

17

Զեռուցվող սենյակում որտեղ է ջերմաստիճանն ավելի բարձր:

- 1) հատակի կամ առաստաղի մոտ
- 2) բոլոր տեղերում նույնն է
- 3) հատակի մոտ
- 4) առաստաղի մոտ

18

Ինչպիսի արոցեզի դեպքում է, որ գազին հաղորդած ամբողջ ջերմաքանակը ծախսվում է միայն նրա ներքին էներգիայի փոփոխության վրա:

- 1) իզոբար
- 2) իզոխոր
- 3) ադիաբատ
- 4) իզոթերմ

19

Ինչպե՞ս է փոխվում ջրի եռման ջերմաստիճանը բարձր սարի գագաթից ստորոտ իջնելիս:

- 1) չի փոխվում
- 2) կարող է մեծանալ կամ փոքրանալ
- 3) մեծանում է
- 4) փոքրանում է

20

q կետային դրական լիցքը տեղադրված է տարանուն,

մոդուլով իրար հավասար լիցքեր ունեցող երկու գնդերի



կենտրոնները միացնող ուղղի վրա: Ի՞նչ ուղղություն

ունի q կետային լիցքի վրա ազդող կուլոնյան ուժերի համագորք:

- 1) \downarrow
- 2) \rightarrow
- 3) \uparrow
- 4) \leftarrow

21


Հարթ օդային կոնդենսատորների թիթեղների միջև լցրին ε դիէլեկտրական քաշանցելիություն ունեցող նյութ: Ինչպե՞ս փոխվեց կոնդենսատորի էլեկտրառունակությունը:

- 1) փոքրացավ 2ε անգամ
- 2) մեծացավ ε անգամ
- 3) չփոխվեց
- 4) մեծացավ 2ε անգամ

22

Որքա՞ն է հոսանքի ուժը շղթայում, եթե իդեալական վոլտաչափը ցույց է տալիս U լարում:

- 1) $\frac{U^2}{R}$
- 2) $\frac{U^2}{2R}$
- 3) $\frac{U}{R}$
- 4) $\frac{U}{2R}$



23

Ինչպե՞ս կփոխվի լրիվ շղթայի արտաքին դիմադրության վրա լարման անկումը, եթե արտաքին և ներքին դիմադրությունները մեծացնենք 2 անգամ:

- 1) չի փոխվի
- 2) կփոքրանա 4 անգամ
- 3) կմեծանա 4 անգամ
- 4) կմեծանա 2 անգամ


24

Քառարժեք սիլիցիումին խառնել են եռարժեք ինդյում: Ի՞նչ տեսակաի հաղորդականությամբ է օժտված այդ դեպքում կիսահաղորդիչը:

- 1) Էլեկտրոնային կամ խոռոչային
- 2) Էլեկտրահաղորդականությամբ օժտված չէ
- 3) Էլեկտրոնային
- 4) խոռոչային

25


Դրական լիցքավորված մասնիկը v արագությամբ մտնում է համասեռ մազնիսական դաշտ և շարժվում նկարում պատկերված հետազծով: Ինչպես է ուղղված մազնիսական դաշտի ինդուկցիայի վեկտորը:



- 1) ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի դիտողը
- 2) ուղղահայաց է նկարի հարթությանը և ուղղված է դեպի նկարը
- 3) զուգահեռ է նկարի հարթությանը և ուղղված է դեպի վերև
- 4) զուգահեռ է նկարի հարթությանը և ուղղված է դեպի ներքև

26

Ուղիղ հաղորդալարով հոսում է I հոսանք, ինչպես ցույց է տրված նկարում: Ինչպես է ուղրված նրա ստեղծած մազնիսական դաշտի ինդուկցիան A կետում:



- 1) նկարի հարթությունից դեպի դիտողը
- 2) դիտողից դեպի նկարի հարթությունը
- 3) դեպի ներքև
- 4) դեպի վերև

27

Առաջին դեպքում մազնիսը հաստատուն արագությամբ մտցնում են կոճի մեջ, երկրորդ դեպքում կոճի մեջ մազնիսը գտնվում է դադարի վիճակում: Ո՞ր դեպքում է կոճում մակածվում էլեկտրական դաշտը:

- 1) երկու դեպքում էլ
- 2) ոչ մի դեպքում
- 3) միայն առաջին դեպքում
- 4) միայն երկրորդ դեպքում

28

Ի՞նչ մեծություններից է կախված հոսանքակիր կոճի մազնիսական դաշտի էներգիան:

- 1) կոճի ինդուկտիվությունից և հոսանքի ուժից
- 2) հոսանքակիր կոճը մազնիսական դաշտի էներգիայով օժտված չէ
- 3) միայն կոճի ինդուկտիվությունից
- 4) միայն կոճում հոսանքի ուժից

29

Ինչպե՞ս կփոխվի կոնտուրում կեկտրամագնիսական տատանումների պարբերությունը, եթե կոճի մեջ մտցնենք երկարեւ միջուկ:

- 1) չի փոխվի
- 2) կարող է մեծանալ կամ փոքրանալ
- 3) կմեծանա
- 4) կփոքրանա

30

Ինչպե՞ս կփոխվի հայելու մակերևույթին ընկնող և անդրադարձող ձառագայթների կազմած անկյունը՝ անկման անկյունը 20° -ով մեծացնելիս:

- 1) կմեծանա 40° -ով
- 2) չի փոխվի
- 3) կմեծանա 10° -ով
- 4) կմեծանա 20° -ով


31

Ինչպե՞ս կփոխվի առարկայի և հարթ հայելում նրա պատկերի հեռավորությունը, եթե հայելին տեղափոխենք այնտեղ, որտեղ նրա պատկերն էր:

- 1) կփոքրանա 2 անգամ
- 2) չի փոխվի
- 3) կմեծանա 2 անգամ
- 4) կմեծանա 4 անգամ

32


Նկարում աշակերտը պատկերել է օդում ապակե թիթեղի վրա ընկնող լուսի ձառագայթի ընթացքը: Որտե՞ղ է նա սխալվել:



- 1) և՛ օդից ապակի, և՛ ապակուց օդ անցումների դեպքում
- 2) ճիշտ է պատկերված բոլոր դեպքերում
- 3) օդից ապակի անցման դեպքում
- 4) ապակուց օդ անցման դեպքում

33

Ինչպիսի՞ն է AB առարկայի պատկերը հավաքող բարակ ոսպնյակում:



- 1) կեղծ, մեծացված, ուղիղ
- 2) կեղծ, փոքրացված, ուղիղ
- 3) իրական, մեծացված, շրջված
- 4) իրական, փոքրացված, շրջված

34

Փոխվո՞ւմ են արդյոք լուսի ալիքի երկարությունն ու հաճախությունը օդից ապակի անցնելիս:

- 1) երկուսն էլ փոխվում են
- 2) երկուսն էլ չեն փոխվում
- 3) ալիքի երկարությունը փոխվում է, հաճախությունը՝ ոչ
- 4) հաճախությունը փոխվում է, ալիքի երկարությունը՝ ոչ

35

Ո՞ր համարով է նշված այն երևույթը, որը բացատրվում է լուսի ռիսավերսիայով:

- 1) ստվերի առաջացումը
- 2) հայելուց լուսի անդրադարձումը
- 3) լուսի ալիքի կողմից խոչընդոտները շրջանցելը
- 4) ապակու պրիզմայով անցնելիս լուսի տարրալուծումը տարբեր գույների

36

Նշվածներից որի՞ ալիքի երկարությունն է ավելի մեծ:

- 1) ռենտգենյան ճառագայթում
- 2) ռադիոալիքներ
- 3) տեսանելի լուս
- 4) անդրամանուշակագույն ճառագայթում

37

Ստորև բերված պնդումներից ո՞րն է ճիշտ:

- 1) Վակուումում լուսի արագությունը նույնն է հաշվարկման բոլոր իներցիալ համակարգերում:
- 2) Որոշ նյութական մարմիններ կարող են շարժվել վակուումում լուսի արագությունից մեծ արագությամբ:
- 3) Վակուումում լուսի արագությունը կախված է աղբյուրի շարժման արագությունից:
- 4) Վակուումում լուսի արագությունը կախված է դիտողի արագությունից:

38

Հանգստի վիճակում գտնվող m զանգվածով ատոմը ճառագայթում է ν հաճախության ֆուտոն: Որքա՞ն է այդ դեպքում ատոմի ձեռք բերած իմպուլսը:

- 1) $\frac{h\nu}{c}$
- 2) $\frac{h\nu}{mc}$
- 3) 0
- 4) mc

39

Մետաղը լուսավորում են ν հաճախությամբ լուսով: Որքա՞ն է պոկված կեկտրոնների առավելագույն կինետիկ էներգիան, եթե մետաղից կեկտրոնները պոկելու ելքի աշխատանքը A է, իսկ $\Psi_{\text{լանկի}}$ հաստատունը՝ h :

- 1) $E_{\text{լ}} = A - h\nu$
- 2) $E_{\text{լ}} = h\nu$
- 3) $E_{\text{լ}} = h\nu - A$
- 4) $E_{\text{լ}} = h\nu + A$

40

Որքա՞ն է պրոտոնների Z և նեյտրոնների N թիվը ատոմի ${}^{17}_{\text{O}}$ միջուկում:

- 1) $Z = 9, N = 17$
- 2) $Z = 9, N = 25$
- 3) $Z = 8, N = 8$
- 4) $Z = 8, N = 9$

41

Օդային հարթ կոնդենսատորի շրջադիրներից յուրաքանչյուրի մակերեսը 50 սմ^2 է, կոնդենսատորի լիցքը՝ 1 նԿ, իսկ շրջադիրների միջև լարումը՝ 80 Վ : Որքա՞ն է շրջադիրների միջև հեռավորությունը: Էլեկտրական հաստատունը՝ $\epsilon_0 = 8,85 \cdot 10^{-12} \text{ Ֆ/մ}$: Պատասխանը բազմապատկեք 10^5 -ով:

42

Մետաղի մակերևույթը հերթով $4,2 \cdot 10^{14}$ Հց և $6,8 \cdot 10^{14}$ Հց հաճախություններով լույսով լուսավորելիս նրանից անջատված ֆոտոէլեկտրոնների առավելագույն արագությունները տարբերվում են 2 անգամ: Որքա՞ն է այդ մետաղի ելքի աշխատանքը: Պլանկի հաստատումը $6,6 \cdot 10^{-34}$ Զվ է:

Պատասխանը բազմապատկեք 10^{20} -ով:

43

Առանց սկզբնական արագության ազատ անկում կատարող մարմինը Երկրի վրա ընկավ 40 m/s արագությամբ: Ի՞նչ բարձրությունից էր ընկնում մարմինը: Ազատ անկման արագացումը՝ 10 m/s^2 :

44

Եթե հնարավոր լիներ լրիվ օգտագործել այն էներգիան, որն անջատվում է 250 q ջուրը $30 \text{ }^{\circ}\text{C}$ -ից մինչև $10 \text{ }^{\circ}\text{C}$ սառեցնելը, որքա՞ն հնարավոր կլիներ բարձրացնել 1 կգ զանգվածով բեռք: Զրի տեսակարար ջերմունակությունը $4200 \text{ }\Omega/\text{կգ}^{\circ}\text{C}$ է, ազատ անկման արագացումը՝ 10 m/s^2 :

(45-46) Էլեկտրական սալիկը 220 Վ լարման ցանցին միացնելիս նրանում անջատվում է 1,1 կՎտ հզորություն:

45

Որքա՞ն է էլեկտրական սալիկի ռիմադրությունը:

46

Որքա՞ն է հնսանքի ուժը էլեկտրական սալիկում:

(47-48) Դիֆրակտային ցանցի վրա, որի պարբերությունը $2,6 \cdot 10^{-6}$ մ է, ընկնում է 650 նմ ալիքի երկարությամբ մեներանգ լուսային ալիք:

47

Քանի՞ աստիճան անկյան տակ է ստացվում 2-րդ կարգի մաքսիմումը:

48

Որքա՞ն է դիտվող մաքսիմումների առավելագույն թիվը:

(49-50) 65 մ ձանապարհի վրա 5 տ զանգվածով վագոնի արագությունը 4 մ/վ-ից աճեց մինչև 9 մ/վ: Շարժումը համարել հավասարաչափ արագացող:

49

Որքա՞ն է վագոնի արագացումը: Պատասխանը բազմապատկեք 10-ով:

50

Որքա՞ն է վագոնի վրա ազդող ուժերի համազորը:

(51-52) Համասեռ մարմնի կշիռը $1000 \text{ կգ}/\text{մ}^3$ խտությամբ հեղուկում $0,8$ է, իսկ $600 \text{ կգ}/\text{մ}^3$ խտությամբ հեղուկում՝ 1 է: Ընդունել՝ ազատ անկման արագացումը $10 \text{ մ}/\text{s}^2$ է:

51

Որքա՞ն է մարմնի ծավալը: Պատասխանը բազմապատկեք 10^5 -ով:

52

Որքա՞ն է մարմնի խտությունը:

(53-54) Աղիաբատ ընդարձակման ժամանակ 1 մոլ միատում իդեալական գազը կատարեց 2490 Ω աշխատանք: Գազի սկզբնական ջերմաստիճանը 177°C էր:
Գազային ռոնդվերսալ հաստատունը՝ $8,3 \Omega/\text{մոլ}^{\frac{1}{2}}$ է:

53

Որքա՞ն է այդ դեպքում գազի ներքին էներգիայի փոփոխության մոդուլը:

54

Որքա՞ն է գազի վերջնական ջերմաստիճանը Կելվինի սանդղակով:

(55-57) Գլանում միտցի տակ գտնվող 190 սմ³ ծավալով իդեալական գազը, որի ջերմաստիճանը 323 Կ է, տաքացնում են 102 Կ-ով: Միտցի զանգվածը 120 կգ է, նրա մակերեսը՝ 50 սմ², մթնոլորտային ճնշումը՝ 0,1 ՄՊա: Ազատ անկման արագացումը 10 մ/վ² է:

55

Որքա՞ն է զազի ճնշումը: Պատասխանը բազմապատկեր 10^{-4} -ով:

56

Որքա՞ն է զազի ծավալը տաքացնելուց հետո: Պատասխանը բազմապատկեր 10^5 -ով:

57

Որքա՞ն է զազի կատարած աշխատանքը: Պատասխանը բազմապատկել 10 -ով:

(58-60) Հավաքող ոսպնյակի կիզակետային հեռավորությունը 18 սմ է: Առարկայի պատկերը ստացվում է ոսպնյակից 9 սմ հեռավորությամբ:
Պատկերի բարձրությունը 6 սմ է:

58

Որքա՞ն է առարկայի հեռավորությունը ոսպնյակից: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:


59

Որքա՞ն է պատկերի խոշորացումը: Պատասխանը բազմապատկեք 10 -ով:

60

Որքա՞ն է առարկայի բարձրությունը: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

- (61-64) $m_1 = 100$ գ և $m_2 = 300$ գ զանգվածներով գնդիկները կախված են $l = 80$ սմ երկարությամբ թելերից այսպես, որ շոշափում են միմյանց: m_1 զանգվածով գնդիկը շեղում են հավասարակշռության դիրքից $\alpha = 90^\circ$ -ով և բաց թողնում: Գնդիկների բախումը համարել բացարձակ առաձգական: Թելի զանգվածն ու օդի դիմադրությունն անտեսել, ընդունել՝ $g = 10$ մ/վ²:



61 Որքա՞ն է m_1 զանգվածով գնդիկի արագության մոդուլը բախումից անմիջապես հետո:

62 Որքա՞ն է m_2 զանգվածով գնդիկի արագության մոդուլը բախումից անմիջապես հետո:

63 Ի՞նչ առավելագույն բարձրության կիասնի m_1 զանգվածով գնդիկը բախումից հետո: Պատասխանը բազմապատկեր 10-ով:


64

Որքա՞ն է m_2 զանգվածով զնդիկի թելի առավելագույն շեղման անկյան կոսինուսը բախումից հետո: Պատասխանը բազմապատկեք 10^2 -ով:

(65-68) Էլեկտրական շլթան կազմված է $\varepsilon = 100$ Վ, E_{C} և $r = 5 \Omega$ ներքին դիմադրություն ունեցող հոսանքի աղբյուրից և $R_1 = 3 \Omega$, $R_2 = 2 \Omega$, $R_3 = 18,8 \Omega$ դիմադրություններով երեք դիմադրատարրերից, ինչպես պատկերված է նկարում:

65

Որքա՞ն է հոսանքի ուժը R_3 դիմադրատարրում:




- 66** Ωρքա՞ն է հոսանքի ուժը R_1 դիմադրատարրում: Պատասխանը բազմապատկեք 10-ով:
- 67** Ωրքա՞ն է պոտենցիալների տարբերությունը հոսանքի աղբյուրի սեղմակներում:
- 68** Ωրքա՞ն է հոսանքի աղբյուրում անջատված ջերմաքանակը 10 Վ-ում:

69

Հաստատուն զանգվածով իդեալական գազի հետ ընթացող պրոցեսը $V-T$ կոորդինատային համակարգում պատկերված է նկարում: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Պրոցեսի ընթացքում գազի ներքին էներգիան չի փոխվում:
- 2) Պրոցեսի ընթացքում գազի ճնշումը նվազում է:
- 3) Պրոցեսի ընթացքում գազի մոլեկուլների միջին կինետիկ էներգիան մեծանում է:
- 4) Պրոցեսի ընթացքում գազն արտաքին ուժերի դեմ կատարում է դրական աշխատանք:
- 5) Պրոցեսի ընթացքում գազի ստացած ջերմաքանակը մեծ է նրա կատարած աշխատանքից:
- 6) Պրոցեսի ընթացքում գազն արտաքին մարմիններից ջերմաքանակ է ստանում:



70

Նկարում պատկերված է ֆոտոէֆեկտի վոլտամպերային բնութագիծը: Հաստատեք կամ ժխտեք հետևյալ պնդումները:

- 1) Եթե էլեկտրոդներին կիրառված լարումը զրո է, ֆոտոհոսանքի ուժը նույնպես զրո է:
- 2) Լարման որոշակի արժեքից մեծ լարումների դեպքում ֆոտոհոսանքի ուժն այլևս չի աճում:
- 3) Հոսանքի հազեցումը պայմանավորված է նրանով, որ կաթոդից պոկված էլեկտրոնները չեն հասնում անոդին:
- 4) Ֆոտոհոսանքի առավելագույն I_m արժեքը կախված է ընկնող լույսի ուժգնությունից:
- 5) Կաթոդի վրա ընկնող լույսի ուժգնությունը փոխելիս կասեցնող լարման U_0 արժեքը փոխվում է:
- 6) Նույն ուժգնության դեպքում լույսի հաճախությունը փոքրացնելիս գրաֆիկի՝ կասեցնող լարմանը համապատասխանող կետը կտեղափոխվի դեպի աջ:

